

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>


E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>





ՀՐԴԵՆ ՆԱՎԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ



Կազմող՝ Գ. Ն. Երզնկյան

Ալեքսանդր Շիրվանզադե

Պատմվածքներ (կազմ.՝ Գ. Ն. Երզնկյան), Երև. Լույս, 1986. — 175 էջ:

Ը 661 Դրանցում պարզ երևում է հեղինակի լավագույն պատմվածքների մի շաբաթական պահանջումը՝ սոսրաբարշության, շողաբորթության, մարդու սոսր արարքների նկատմամբ:

Հ 4702080100 (51) 206 1986
Հ 702 (01) 1986



Александр Ширвандадзе
РАССКАЗЫ
(на армянском языке)
Издательство «Луис»
Ереван—1986

Հ 4702080100 (51) 206 1986
Հ 702 (01) 1986



ՀՐԴԵՀ ՆԱՎԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի պատկեր Բարձր մշակների կանքից)

— Աղա, զավոդն այլրում է:

Իվան Գրիգորի Մարտումյանը մի միջահասակ, շաղ և բավական շահել մարդ էր նվազական և՛ ճագուստով: Նրա լիք, կոլորակ և մաքուր սափրած երևսի կարմիր գույնը մի վայրկյանում թռավ դժբախտ լուրը լսելու ժամանակի:

— Ե՞րբ, ո՞ր ժամին, զավոդի ո՞՞ կողմից է սկսվել հրդեհը, — վերին աստիճանի անհամբերությամբ: Հրամայաբար հարցնում էր նա, երկու փողքիկ և խորամանկ աշբերի բիբերը արագությամբ շուր տալով և ձեռները տարածելով դեպի առաջ, կարծես նա ուզում էր կատաղաբար հարձակվել չարագուշակ լրաբերի վրա և տեղնուտեղը խեղդիկ նրան:

— Կրակը երևացել է մոտ քառորդ ժամ սրանից առաջ, — զողովուն ձայնով պատասխանեց լրաբերը, երկյուղածությամբ հետ ու հետ քաշվելով: Ես նոր գործս վերջացրել ե պատրաստվում էի քննելու, երբ ականչիս հասավ մի տրաքոցի ձախն Զայնը սաստիկ էր, կարծես թե ամբողջ զավուր քարուքանդ էր լինում... Ես մի քանի բոսք մնացի շվարած... շգիտեի ի՞նչ անեմ, ո՞ւր վազեմ: Մի կերպ խելքս գլուխս հավաքեցի և դուրս թռաւ. հենց այն է ուզում էի առաջ վազել, մեկ էլ տեսնեմ աշ կող-

մից, կաթսաների բաժնից, բոցախառն ծուխը դուրս է փշում... Հասկացա, որ մեծ նավթակաթսաներից մեկը պատովել է: Կրակը դիմում էր զեսի յուղ մաքրելու բաժնիք: Մշակները զարթնել էին, և որը տեղոր, որը հագուստով, ամենքը դիմում էին կրակ երկացող տեղը՝ հրդեհի առաջն առնելու: Ես իսկուն վազեցի քաղաք, որ ձեզ հայտնեմ:

Իվան Գրիգորիչի կուրծքը անհամբեր չնշառութենից արագությամբ բարձրանում և ցածրանում էր: Մի քանի վայրկան լուս մտածելով, նա դիմեց ծառաներից մեկին, որոնք բերաները բաց արած ուշագրությամբ լուսմ էին լրաբերի խոսքերը:

— Այս վայրկյանիս լծվի իմ կառքը, ևս առանց բոպե ուշանալու պիտի գործարան հասնեմ:

Սառաները վազեցին աղայի հրամանը կատարելու:

— Վերջը առնս կրանդեն, ինձ կսնանկացնեն, հետին աղքատության մեջ կծգն, օրվա հացին կարոտ կդարձնեն այդ անիծվածները... այդ անսպատանները... մարդու կերպարանք ունեցող անխիղճ գաղանները... այդ... այդ... այդ...

Թող աստված պատժի այն շար մարդուն, որը համարձակվել է այդ վնասը ձեզ հասցնել... աստուծու կամքն է, աղա, մենք ինչ անենք, մենք իս շենք կրակ գցում ու այրում ձեր գործարանը:

Լրաբերը այս ասելով, գդակը ձեռքին հեռացավ պատի տակ: Ընդարձակ նախասենյակի պատից քաշ տված կանթեղի ճառագայթները, մի րոպե տարածվելով նրա նավթախառն մուրի մեջ կորած բարձր հասակի վրա, լուսավորեցին նրա սև և կեղտոտ դեմքը:

Խիտարուս հոնքերի տակից փայլեցին անսովոր վիշտ արտահայտող սև աշեքերը: Բայց գլխի ալեխառն մազերի բնական գույնը կորել էր բանձր կեղտի և նավթային մուրի տակի:

— Մշակն ո՞վ է, որ նրա աստվածը ո՞վ լինի,— գոշում էր իվան Գրիգորիչը կատաղի առյուծի նման:— Մշակն աստված չունի, նրա աստվածը փայտն է: Եթե դուք աստված ունենայիք, մի տարվա մեջ իմ գործարանը երկու անգամ չեր այրվի: Եթե դուք խիղճ և հոգի ունենալիք, ձեր կյանքը կզոհնիք և չէիք թողնի, որ ձեր աղին, ձեզ կերակրողին վնաս հասներ:

Լրաբերը լուս էր, նա գիտեր, որ իվան Գրիգորիչի ինքնահայան բնավորությունը սաստիկ թշնամի է որիշների հակախոսության, նամանավանդ այդպիսի դժբախտության բոպեներում:

— Աղա, ֆայտոնը պատրաստ է, — ներս վազեց ծառան:

— Ես գնում եմ, որ էլ վաղիր այս բոպեիս գործարան, — դարձավ աղան դեպի լրաբերը:

Մի քանի րոպեից հետո սևագույն նժույգներով լծված փառավոր կառքը, թանկապին, տաք մուշտակի մեջ փաթաթված իվան Գրիգորիչին տանում էր գործարան:

Հյուսիսային քամին փլում էր, անձրևի կաթիները, բռնի գորութենով զարկվելով կառքի պատուհաններին, կրկնապատկում էին իվան Գրիգորիչի հուզումը: Կարծես բավական չեր մարդկանց շարամտությունը, մշակների անխղճությունը, բնությունն էլ մի կողմից էր գործ զնում յուր խստությունը, հակառակի նման հենց այս գիշեր բարձրացնելով ներհակ քամի հրդեհին ավելի ուժ տալու համար:

Այս բոլորի մասին իվան Գրիգորիչը կառքի մեջ մտածելով անշափ կատաղած էր, որ, կարծես, ահա-ահա բարկութենից պիտի տրաքվի յուր գործարանի նավթակաթսայի պես: Ժամանակ-ժամանակ, կառքի պատուհանից գլուխը դուրս բերելով, մտիկ էր անում հեռավոր կրակի լուսավորության և անհամբերությամբ հրամայում կառապանին քառորդ ժամում գործ զնել երկու կշտակեր և առույգ ձիերի մի ամբողջ շարաթվա հանգառութենից ստացած ուժն ու զորությունը:

Համելով քաղաքի ծայրը, կառապանը մի անգամ ևս մտրակեց ձիերին, և կառքն անհետացավ գիշերային խավարի մեջ: Իսկ լրաբերը, զուրս վազելով փողոց, առանց վայրկյան հապաղելու, ճանապարհվեց զեսի գործարան: Նա շպիտի ուշագրություն դարձնի ո՞չ քամու, ո՞չ անձրևի վրա: Նրան հրամայված է ինչպեսից շուտ աեղ համնել: Նա չի կարող ուշանալ, այսպիսի բոպեներում ամենաշնչին թույլությունը մշակի կողմից աղայի աշխատ մեծ հանցանքի է փոխվում:

Այրվող գործարանը քաղաքից երեք վերստ հեռու էր զանվում: Լրաբերը ճանապարհը կարծելու համար ծովի ափով էր գնում: Լայնատարած ծովի ալիքների շփշփոցը գիշերվա խավար մթնոլորտի մեջ տարածվելով, անախորժ, երկուողակի տպավորություն էր անում մարդու վրա: Ո՞չ մի շնչափոր արարած, ո՞չ մի կենդանի առարկա չեր երեսում ծովափում, բացի այդ սև և վիթթարի մարդուց, որ գիշերվա ուրվականի նման հսկայական քայլերով շտապում էր դեպի առաջ, խորը ավաղի մեջ թաղելով յուր ոտները: Հանկարծ նա կանգնեց, կարծես, մի բան մտարերելով և, երկու ձեռները մեքենարար խիելով ճակատին, մի բոպե անշաբդ մնաց:

— Տե՛ր աստված, եղբայրս և փոքր որդիս հրդեհից քիչ առաջ պատկել էին քնելու... բայց որտե՞զ... այո՛, այո՛, հիշում եմ, հենց այն կողմում... ուր որ կաթսան արաքվել էր... նրանք, շղիմանալով մեր ընդհա-

նուր սենյակի ցրտին, այս գիշեր տեղափոխվել էին կաթսաների բաժինը՝ վառարանի մոտ քնիլու Տե՛ր աստված, ի՞նչ կպատահի նրանց, եթե ժամանակին շեն զարթնել... այրվող նավթը ուղղակի նրանց կողմն էր զիմում... նրանք աշքովս շրնկան:

Երկնակամարը կրակի լույսից շառագունել էր, քամու զորությունից բացը կատաղաբար այս ու այն կողմ էր տարածվում... Ամբողջ Սև քաղաքը ծխի մեջ թաղվել էր, իրաբերը սկսեց յուր հոգնած ոտներին ուժ տալ:

Տեղ հասնելով, իվան Գրիգորիի առաջին հայացքը հազիվ կարողացավ ճանաչել կրակի և ծխի մեջ կորած զորաբանը: Սև քաղաքի հասարակությունը պատել էր հրդեհը, շուրջը կազմելով մի օղաձև շրջան, որի մեջտեղը այրվում էր մի ընդարձակ խարույկ: Այս ու այն կողմերից վազում էին մարդիկ, որոնց մրոտ գեմքերի վրա ողնոնց զարմացման նշաններ չեն նկատվում: Այդպիսի և սրանից ավելի զորեղ հրդեհներ նրանց համար սովորական դեպքեր են:

— Աստված սիրե՛ք... մոտեցե՛ք... օգնեցե՛ք... մի՛ վախենաք... և փող կտամ, կվարձատրեմ օգնողներին,— եղավ իվան Գրիգորիի առաջին բացականչումը, որ պիսակոր վազելով ամբոխի միջից ձգտում էր դեպի կրակը:

— Մի՛ մոտենաք, աղա՛... առաջ մի՛ վազեք, վտանգալի է,— գոշեցին այս ու այն կողմից ամբոխի միջից, հետ մզելով նրան:

Բոցը երկու զորեղ մասերի էր բաժանվել: Մեկը դուրս էր զալիս մի՛ արկանի տան փլատազիած կտորից, դուներից ու պատուհաններից, Այրվում էր յուղ մաքրելու բաժինը: Մյուսը, տասնուշինդ քայլ հեռավարութենում մի գետնափոր շինության միջից դուրս ձգմելով, սրբնթաց բարձրանում էր ամբողջ շինության տարածության շափով: Բոցավազվել էր նավթային մնացորդի պահեստը: Իսկ այս երկու բոցաշտարակների մեջտեղը ներկայացնում էր կատարյալ իրական դժոխք: Այս կաթսաների բաժինն էր, որտեղից առաջին անգամ կրակը սկսվելով տարածվել էր ո՛չ մի առարկա կրակի ճանկերից շեր ազատվել: Բացի մի քանի երկաթե կաթսաներից, որոնք իրանց միջի դյուրաբորբոր, կիսապատրաստ-ֆոտոգենի հանկարծակի բոցավառության հայթումից պատովելով այս ու այն կողմ էին գործել. ամեն ինչ մոխիր դասնալու վրա էր:

Խորտակված պատերի ճեղքերից թանձր ու սև ծուխը դուրս գալով, ոլոր-մոլոր պատուաներով միանում էր բոցի լայնաշրջան աշտարակի հետ, ինչպես փոքրիկ գետակները հոսում են ընդարձակ գետի մեջ, զորացնելով նրա կատաղի ընթացքը:

Գործարանի բակը ծածկված էր խառնիճաղանց ամբոխով... ոտ զնելու տեղ չկար: Իվան Գրիգորիլը բազմության առաջ կանգնած կարգագործություններ էր անում: Ամբոխի միջից մի քանիսը զանազան խորհուրդներ էին տալիս նրան:

— Այս միջոցներով անհնարին է բան առաջացնել, Հարկավոր է նոր բելի գործարանից հրաշեց նասոսներ բերել տալ,— ասում էր մեկը:

— Այո՛, այո՛, միայն նորելի գործիքները կարող են այդ կրակին հաղթել,— ավելացնում էր մի ուրիշը:

Սրանք հարկան գործարանատերերն էին, որոնք ու այնքան իվան Գրիգորիի մասին իին հոգում, որքան վախնուում էին, որ միգուցի հրդեհը իրենց գործարանները համար:

Իվան Գրիգորիլը շեր լսում նրանց:

— Օգնեցե՛ք... շատապեցեք... ևս փող կտամ... ջուր հասցրեք, ի՞նչ եք սառել... անպիտաններ... քանդեցիք զուր իմ տունը, սրիկաններ... գրդեր... ավագակներ,— անդադար հայցոյում էր նա մշակներին, շվարած այս ու այն կողմ վազվելով:

Հրդեհի հանգստիլուն բացի իվան Գրիգորիլի գործարանի մշակներ թից, օգնում էին և ուրիշ գործարանների մշակներ ու կողմնակի մարդիկն Միայն առաջինները գործում էին ուղղակի կրակի դեմուգեմ, ամենավտանգավոր տեղում, իսկ մյուսները աշխատում էին որքան կարելի է հեռվից գործել, խուս տալով կատաղի բոցի ալիքներից: Առաջինները հրաշեց նասոսների խողովակների ծայրերից բռնած շփում էին ջուրը կրակի դեպի զորեղ կենտրոնը, որտեղից բոցը ջրի ամեն մի զարկին խուլ արձագանքներ էր տալիս, իսկ մյուսների մի մասը հեռվից նասոսների կոնակներն էին պտտեցնում, մնացյալները ջուր էին ավելացնում նասոսներին: Մշակների մի ուրիշ խումբ թիերառ հող էր սփռում երկու կողմերից նավթային մնացորդների բոցավառված պահեստի վրա:

Մի քանիսը իվան Գրիգորիլի մշակներից անգիտակցարար այն աստիճան մոտեցել էին կրակին, որ ամբոխը նրանց փոխարեն սարսափում էր: Տոթը խեղդում էր նրանց, կրակի ատքությանը կիզում էր նրանց կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անձերի նման հնդեղվում էին նրանց պլիսին, բայց խորասուզված իրանց գործի մեջ, կարծես, նրանք ոչինչ զգում: Ամեն վայրկյան նրանց նավթաթաթախ ցնցոտիները սպառնում էին բոցավառվել թափվող կայծերից: Մի քանի ուրիշ բանվորներ այդ թշվառներին վերջին վտանգից ապահովելու համար բավական հեռվից մի փոքրիկ նասոսով ջուր էին սրսկում նրանց վրա:

Թեթևամիտ ամբոխը շատ ժամանակ յուր աշբ ասաց կատարվող

ամենաողբալի տեսարանների մեջ անգամ բնազդաբար ձգտում էր զբանել որևից նյութ յոր վայրենի զվարճության համար:

— Մենք էլ գնանք ու այս վերջինների վրա չուր ածենք, — ասում էին մի քանիսը, անամոթաբար ծիծաղելով:

— Գնացե՞ք... իսկ մենք էլ այստեղից ձեզ վրա հող կածենք, — ավելացնում էին որդիշները, նույնպես ծիծաղելով:

— Ինչ շաղ կրակ է, տղերք, խորովածի համար, — ասում էր մեկը, բեղերը շփելով:

Բոցը զորանում էր... ամբոխը, շղիմանալով շոգին, սկսեց աստիճանաբար հեռու ու հեռու խույս տալ:

— Փախե՞ք... փախե՞ք... հեռացե՞ք... պատը քանդվում է, — զոռաց չանկարծ միաբերան ամբոխը, սեղմվելով միմյանց և ավելի հետ մղվելով:

Բարձրացավ մի խուլ որոտածայն մի ձայն, որ նմանվում էր հարցուրավոր թնդանոթների պայմանին, Մի վայրկյանում մթնեց բոլորը, և ամբոխի առաջ ամեն ինչ կորավ թանձր խավարի մեջ: Բոցը, ծուխը, կրակը, մուրը և խորտակված պատի հողափոշին, խառնվելով իրարու, աներկութացրին հրաշեց մշակներին:

— Վա՛յ գլուխու... վա՛յ մեջքս կոտրվեց... աստված սիրեք... օգնեցե՞ք... մեռա... — լսվում է խավար գեհենի միջից:

— Ուներս փշրվեցին... վա՛յ... վա՛յ... ա՛հ, ինեղվեցի, աստված... օգնեցեք, դուրս բերե՞ք ինձ այստեղից, ոչինչ շեմ տեսնում, — զոռում էին մի ուրիշ կողմից:

— Ձեռքս... ձեռքս... ա՛յ... ա՛յ... ա՛յ... ա՛յ... մի՛ մոտենաք, այրվում է ձեռքս... ու իֆ... ո՞ւ իֆ:

Ամբոխը մոռացավ ծիծաղն ու կատակը. ամենքի երեսների վրա երկացին հուսահատության նշանները... ո՞ւր աներկութացան առաջին կարգի հրաշեց մշակները: Կավում էին միայն աղերսանքի, ցավի հառաւանքներ, օգնություն խնդրող ձայներ, բայց հայտնի չէր ո՞ր կողմից էին գալիս նրանք, ինչտեղ էին աղերսողները:

Հովհաննու երեսակայության արտարուսն անգամ չէր կարող մրցել այս իրական գժոխիք հետ: Իվան Գրիգորիշի բարկությունն ու շփոթությունը փոխվել էին անորոշ սարսափի, մի վայրկյան առաջ նրա կատաղի գեմքն այժմ արտահայտում էր ներքին աշուդող: Անշարժ արձանի նման նա մի տեղում սառել էր և շդիտեր ինչ անի: Նա կամեցավ առաջ վազել, բայց չկարողացավ, որովհետև անհնարին էր: Ծուխն ու փոշին

խանճվելով մուրի, մոխրի և բոցի հետ, կազմել էին նրա առաջ մի անթափանցելի խավար տարածություն:

Հանկարծ ամեն ինչ պարզվեց, և նրա առաջ բացվեցավ մի սոսկալի տեսարան: Այս ու այն կողմ թափալվել էին թվով մինչև մշակների դիմակներ: Երևում էին նույնպես և ոտքի վրա մի քանի ուրվականանաման պատկերներ, որոնցից մեկը բոցավառված, խելագարի պես այս ու այն կողմ էր վազվզում, բացականչելով.

— Օգնեցե՞ք... հայ քրիստոնյաներ... օգնեցե՞ք... խղճացեք... մարմինս այրվում է... շուտ հող ածեք վրաս... ջուր... ջուր... ո՞ւ իֆ... ո՞ւ իֆ... աստված, այրվում եմ...

Սա տարիքը անցկացրած մի ծերունի էր, որի գյուրաբորբոք ցնցուիները բոցավառվել էին և խաշում էին նրա մարմինը կենանի-կենանի, ինչպես միջնադարյան ինկվիզիցիայի թշվառ զահերից մնեկին:

Իվան Գրիգորիշը երեսը շուռ տվեց. նրա նրբացած նյարդերը անգոր էին. դիմանալ մի այդպիսի այլանդակ պատկերի: Ամբոխի միջից շատերը սիրտ առնելով վազեցին առաջ: Ուժեղներից մեկը ստի մի զորեղ հարվածով բոցավառված ծերունուն գլորեց գետին, մնացյալները սկսեցին այս ու այն կողմից հողով ծածկել նրա մարմինը, կիսակենդան թաղելով ողորմելի զառայշալին: Այս միակ միջոցն էր, որով միայն հնարավոր էր հանգնել նրա այրվող ցնցոտիները:

— Խավեցի... ո՞ւ իֆ... այրվեցի... — խուլ ձայնով հառաշում էր ծերունին հողի տակից: Նրա գեմքն այնչափ այլանդակվել էր, որ ներկա եղողներից շատերը կես սարսափով և կես զզվանքով ծածկում էին իրենց աշքերը նրան շտեսնելու համար:

— Ուֆ... ա՛ի աստված, շուտ առ հոգիս... ապատիր տանջվելուց... մի՛ շարշարիր, — շարունակում էր ծերունին, թափալվելով հողի տակ: — Բայց որդիս... ո՞ւ ի որդիս... կինս... որդիքս, աղջկերքս... ջուր... ո՞ւ իֆ, սիրտս...

Վերջին խոսքերն արտասանելիս ծերունու ձախն աստիճանաբար փոխվում էր, հետզհետև թուլանալով:

— Այստեղ եմ, այստեղ... գոռաց մի տասնեռութ-քսան տարիեան երիտասարդ, ձախ ձեռքի վրա հենած յուր աջ թեր, որի այրված կաշին սլլովելով մերկացրել էր կարմիր միսրը... — Ախ... Կծկծում է սիրտս... ո՞ւ իֆ, աստված սիրեք, մի մոտենաք թեսիս... նա այրվում է... կծկծում է:

— Հեռացե՞ք, թշվառ, մի՛ մոտենաք հորդ, քեզ տեսնելով խեղճ ծերունին կածելից կմենքի, — բացականչեցին ամբոխի միջից:

— Բեյրութ... Բեյրութ... եկ, այստեղ եմ.. մոտեցիր, մեռնում եմ...

օ՞չ... օ՞չ... պապակվեցի, — բացականչեց ծերունին, կամենալով ոտքի կանգնել:

Մի քանի վայրկյան հայր ու որդի չկարողացան ճանաշել իրարու: Սերունու ալեռո մորուքը խանձվել էր և երեսում կուշկուչվել:

— Ամա՞ն.. այդ ինչ օրի ևս ընկել, ափի, — ասաց որդին, խելագարի պես արձակվելով ծունկների վրա թալալվող ծերունու վրա:

Մի վայրկյան ծերունին մոռացավ յուր այրված մարմնի կոկիծը և երկու ձեռներով մեքենաբար փաթաթվեց որդու վզին:

Մինչդեռ սրանք հայր ու որդի հեծեծելով, գրկած իրարու, խմում իին ցալի և կոկծանի լիզին, մի քանի քայլ նրանցից հեռու կատարվում էր ուրիշ տեսարան:

Իրեք դժոխային անդունդի հատակից, վեց դիմաթավալ մշակների միշց լսվում էին սիրտ պատուող մորմոքաձախեր, և այս չին նմանվում մարդկացին ձայների, այլ մորթվող անասունների վերջին բառաշումներին և հուսահատ թառանշըին: Թալալվածներից երկուսն արգեն անշնչացած էին. նրանց այլված ու ալլանդակված դեմքերն ալլես չին կրում իրանց վրա մարդկային գեմքի ոչ մի նշան, նրանց աշխերի բիբերը դուրս էին ցցվել ինչպես խորոված շագանակներ մոխրի մեջ: Գլխի ու երեսի մազերի ու հոնքերի հետքեր անգամ չկային. նրանց զուտիները նմանվում էին թեժ կրակի միջից դուրս բերած մսի կտորների: Չորս մարդիկ աշխատում էին նրանց զիակները մի կողմ քաշել:

Մի քանի քայլ հեռու այդ դիմակներից, մի երիտասարդ մշակ, նստած գեանի վրա, ձեռները հողի մեջ տրորելով, բացականշում էր.

— Զենոնը... ո՛ւժ... ո՛ւժ... խաշվեցին... պապակվեցին... տե՛ր աստված... բայց իզուր... նա այլվեց... մեռավ... չկարողացա ազատներ հորեղորորս...

Նրա թեժացած աշքերից զլորվեցին արտասուիքի մի քանի կաթիլներ, և նա ձեռները տանելով դեպի աշքերը, թրչեց յուր պլոկված մատների ծայրերը: Կարծես այդ աղի կաթիլները կարող էին զովացնել նրա սիրտը:

Սրանից մի փոքր հեռու լսվում էին խուզ աղոթքի ձայներ:

— Ո՛վ միակ աստված, և գու, Մուհամմեդ, նրա մեծ մարդարեն, տեսնում եք ձեր սուրք աշքերով, որ մենք ինչ սարսափելի կերպով ենք տալիս մեր հոգին: Լա.. լա, իլլալլա, Մուհամմեդ Բասուլ Ալլահ... Ուսւի ջանաթ...

Այդ պարսիկ մշակներն էին, որոնցից մեկի զլուխը ջարդվելով, զրիթե երկու կտոր էր եղել. նա փշում էր իր վերջին շունչը, իսկ երկուսի ոտներին ու կոներին էին չարգվել:

Ամբոխը խառնվել էր ալնափես, որ ոչ ոք այլևս ուշադրություն չի դարձնում հրդեհի վրա, որն այդ ժամանակ սկսել էր փոքր առ փոքր մեղմանալ:

Իվան Գրիգորիչը գոռում էր.

— Աստված սիրեք... հրդեհը, մի՛ մոռանաք նրան... այդ պիրավորվածներին հետո էլ կարելի է ժողովել, բայց գործարանս, գործարանս, նա ձեռքից զնում է. նա այրվեց. վերջացավ, տունս քանդվում է, ի սեր աստծո, խղճացեք:

Բայց իվան Գրիգորիչի գոռոցների վրա ուշադրություն դարձնողներ քիչ եղան, աշխատում էին նրա հարևան զործարանատերների մշակները, որոնց տերերը ստիպում էին չհեռանալ գործից, մինչև որ բոցը լի դադարի իրենց գործարաններին վտանգ սպառնալ:

— Մենք շենք կարող այդ թշվառներին անտեր, անօգնական թողնելու հրդեհի մասին աշխատելու — զոռում էին ամբոխի միշից դեպի իվան Գրիգորիչը, — այսքան մարդ է կորչում մի բոպեռում, թող կորչի գործարանդ, դու էլ...

— Այո՛, այո՛, դու ևս դրանց այլվելու պատճառը. եթե ժամանակին քո անհծյալ նավթակաթսաները և վառարանը շինել տայիր, այդ գըժքախտությունը չեր պատահիլ ո՛չ քեզ, ո՛չ այդ խեղճերին:

Գործակատարը, որ իվան Գրիգորիչին շվաքի նման հետևում էր ուր նա վազում էր, մոտեցավ նրան և ասաց.

— Իվան Գրիգորիչ, խորհուրդ եմ տալիս հեռու կենալ այդ շարամիտներից, ո՛վ գիտե, ձեզ ինչ վնաս կհասցնեն, նրանք մեր մշակների ընկերներն են, նրանք այժմ գաղանացած են և աստված գիտե ինչեր են մտածում...

Բայց իվան Գրիգորիչը բանի տեղ չեր զնում ո՛չ ամբոխի սպառնալիքը և ո՛չ էլ յուր գործակատարի խորհուրդը: Նրա ուշքն ու միտքը կենարունացած էին միայն և միայն հրդեհի վրա, և նա ամբողջ մարմնով զողում էր, թե ահա կրակը հասնելու է փոտոգենով լի տակառների պահաստին, ուր մոտ հազար լի տակառներ կային: Սակայն այս երկրուդն ավելորդ էր, հրդեհն ալլես այնպիս սաստիկ չեր, ինչպես տասը բոպե առաջ: Կարծես նա յուր վրեժն արդեն հանելով, կամենում էր հանգստանալ:

Քամին զադարել էր, բոցն այլևս կատաղաբար այս ու այն կողմ շեր տարածվում, այլ հանգարտ ու ուղիղ գծով բարձրանալով վեր, լուսավորում էր ներկա եղող ամբոխը, որը այրվածների շուրջը հավաքված, զանազան օգնություն էր հասցնում այդ խեղճերին:

Այդ ժամանակ վազելով ամբոխին մոտեցավ հանկարծ մի բարձրա-

Հասակ մարդ, որի գեմքի վրա նկատելի էին խորին հուսահատության և անորոշ երկուովի նշաններ: Նրա ծունկերը ծալվում էին և դժվարությամբ հնազանդվում նրա գնացքին:

Սա արդին մեղ հայտնի լրաբերն էր:

— Թողեք... թողեք, տեսնեմ ո՞ւր են... ո՞ւր են որդիս... եղբայրս... աստված իմ... նրանք ո՞ւր են...

Ամբոխից ճանապարհ տվեց նրան, և նա շտապով մտավ մեջտեղ:

— Ո՞ւր եք, որտեղ եք, խոսեցեք... Սարդիս... Գասպար... Ա՛խ, Բեյ-բուխն է, եղբորս որդին...

— Ե՞ս... այո՞... բայց իմք ոչինչ, խեղճ հայրս, Ժերունին... նա մեռավ... ահա նա... մեռավ նա մինչև վերջը, յուր ընտանիքի անունը հիշելով... նա վերջին շունը փշեց, քո անունը տալով... «գոնք մինչև եղբորս դալը ապրեմ», ասում էր նա հոգին փշելով:

— Որտեղ է, ցույց տուր ինձ նրա դիակը, բայց որդիս որտեղ է, Սարդիս...

— Մի՛ մոտենար, աղալում եմ, ձեսս, նա այրվում է... կծկնում է... մի՛ կպչիր ձեռներիս... ո՞ւի:

Մի բոակ Մեհրաբը մնաց քարացած, նրա արտասությոց շոր ու ցամաքած աշքերը մեքենաբար դառնում էին մերթ յուր ծերունի ելլոր, մերթ որդու, Գասպարի այրված ու կու եկած ձեռներին, մերթ յուր եղբորորդի Բեյբուխի կաշվից մերկացած աշ թնի վրա: Իսկ ամբոխի զայրացած ուշադրությունը նրա վրա էր:

Այս-տարօրինակ դիրքում նրա ածխագույն դեմքն ու բարձր, ու բարակ հասակը պատկերացնում էր մի մռայլ մարմարոնյա արձան, որի միայն բոցավառ աշքերն էին խանգարում ընդհանուր անշարժությունը: Երեք սոր դաշտուններ միաժամանակ ցցվել էին նրա կրծքի մեջ, որոնցից մեկը՝ եղբոր մահը թափանցել էր մինչև սրտի խորթը, խփելով արյունք գլուխը:

Հանկարծ նա սկսեց երկու ձեռներով ուժգին հարվածներ տալ յուրաց, ալեխանն մազերով ծածկված գլխին: Ամբոխի մեջ շատերի աշքերից արտասութի կաթիլներ էին թափվում:

— Վա՛յ... բաս ևս ի՞նչ պատասխան տանեմ քո ընտանիքին... ևս ի՞նչ պիտի ասեմ կնոջու:

Իվան Գրիգորիչը, լսելով այդ գոռոցը, մոտեցավ մի րոպե ամբոխին:

— Ի՞նչ ես այստեղ գոռոցդ բարձրացրել, խելազար... ի՞նչ բղավելու ժամանակ է... գործարանս ձեռքից գնում է, դու այստեղ գոռ՞ւմ ես. վազիր, ասում եմ, օգնիր այնտեղ:

Մեհրաբը ոչինչ շէր լսում. Նա երեսնիվայր ընկած յուր եղբոր դիակի վրա բառաշում էր, Ամբոխը մնաց զայրացած կամ Գրիգորիչի անտեղի հրամանի վրա:

— Նրա եղբայրն այրվել, մոխիր է դարձել, նրա որդու ձեռները այրվել են և կուշ եկել, իսկ դու այժմ այդ դժվախտից օգնություն ե՞ս պահանջում: Անխիղճ, անաստված. Նա այդ թշվառութենում ինչպե՞ս կարող է օգնել քո անիժված գործարանին, — գոռացին ամբոխի միջից մի քանի տաք գլուխներ:

— Միևնույն է, էլ այսուհետև նրա գոռալը օգուտ չի տա:

Մեհրաբը մեքենաբար զլուխը բարձրացրեց, գառն տանջանքի կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրա, աշքերը փալլում էին հոգեկան կսկիծից: Դեմքն արտահայտում էր խելազար կատաղություն: Նա նմանվում էր այդ դրության մեջ մի կատաղի և հուսահատված ապյուծի, որ պատրաստվում էր հարձակվել յուր թշնամու վրա:

Մի վայրկյան նա այդ անշարժության մեջ մնաց: Իվան Գրիգորիչը կես-բարկացած և կես-երկյուղած դեմքով շվարած նայում էր նրա վրա: Հանկարծ Մեհրաբը կայծակի արագությամբ վեր թռավ տեղից...

— Հա՛... ճշմարիտ է ասում աղան, պետք է նրա հրամանը կատարել, պիտք է օգնել, ես պարտավոր եմ աշխատել:

Նա կամեցավ առաջ շարժվել, բայց ծունկերը շնաղանգվեցին, զլուխը ծանրություն արավ, և նրա վիթխարի մարմինը կայծակահարի նման անշնչացած թափալիք իվան Գրիգորիչի ոտների առաջ, յուր եղբոր սեացած դիակի վրա:

— Գործարանս, գործարանս... աստված սիրե՛ք, տունս քանդկեց:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆՋԱՂԵ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐ

Խմբագիր՝ Ս. Ս. Հակոբյան
Նկարիչ՝ Հ. Ա. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Ն. Իավրյան
Վերսուլող սրբագրիչ՝ Ռ. Ս. Հովհաննես

ИБ 2141

Հանձնված է շարվածքի 03. 02. 1986 թ.: Ստորագրված է տպագրության՝ 3. 06. 1986 թ.: Թուղթ № 3, չափար՝ $60 \times 84^1/16$: Տպագրությունը՝ բարձր Տառատևական՝ «Գրքի սովորական»: Հրատ. 9,56 մամ., տպ. 11,0 մամ., պայմ. 10,23 մամ., տպ. 10,5 դոն. թ. օտ.: Պատվեր 197: Տպագրանակ՝ 50 000:

Գինը՝ 95 կուգ.

«Լույս» հրատարակություն, Երևան-9, Կիրովի 19 ա:

Издательство «Луис», Ереван-9, ул. Кирова, 19 а.

ՀԵՍ Հրատարակությունների, պոլիգրոֆիայի և գրքի առևտիք գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Աւալիրյան 55:

Гипография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.